ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«10» նոյեմբերի 2016 թվական N 183–Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ԵՐԿՐԱՊԱՀ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԳՅՈՒՄՐՈՒ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ ՈՐՊԵՍ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, հիմք ընդունելով «Երկրապահ կամավորականների միություն» Գյումրու տարածքային բաժանմունքի նախագահ Վարդան Սարգսյանի գրությունը (համայնքապետարանում մուտքագրված 2016թվականի հոկտեմբերի 24-ին N 13032 թվագրմամբ)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության «Երկրապահ կամավորականների միություն» Գյումրու տարածքային բաժանմունքին, որպես օգնություն, հատկացնել 200.000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ գյումրեցի թվով 30(երեսուն) ազատամարտիկներից բաղկացած խմբի Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզ այցելելու ճանապարհածախսը և այլ ծախսեր հոգալու նպատակով:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման առաջին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2016թվականի բյուջեի 10/4/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Կողմ (17)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ս. Բալասանյան ____________

Ա. Ադամյան ____________

Հ. Կարապետյան ____________

Լ. Խաչատրյան ____________

Է. Մկրտչյան ____________

Տ.Հովհաննիսյան ____________

Մ. Սահակյան ____________

Լ. Սանոյան

Վ. Եդիգարյան

Ա. Գրիգորյան

Վ. Հունանյան

Գ. Սարգսյան

Կ. Միքայելյան

Տ. Փանոյան

Գ. Գրիգորյան

Կ. Թաթարյան

Ա. Տոնոյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«10» նոյեմբերի 2016 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ու Մ

**«<u>10</u>» <u>նոյեմբերի</u> 2016 թվական N <u>184-Ա</u>**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՆԻ ՓՈՂԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ելնելով Գյումրի համայնքի «Անի փողային նվագախումբ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության երաժշտական գործիքները վերանորոգելու անհրաժեշտությունից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի «Անի փողային նվագախումբ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 100000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ երաժշտական գործիքները վերանորոգելու նպատակով:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2016 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Կողմ (17)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ս. Բալասանյան ____________

Ա. Ադամյան ____________

Հ. Կարապետյան ____________

Լ. Խաչատրյան ____________

Է. Մկրտչյան ____________

Տ.Հովհաննիսյան ____________

Մ. Սահակյան ____________

Լ. Սանոյան ____________

Վ. Եդիգարյան

Ա. Գրիգորյան

Վ. Հունանյան

Գ. Սարգսյան

Կ. Միքայելյան

Տ. Փանոսյան

Գ. Գրիգորյան

Կ. Թաթարյան

Ա. Տոնոյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՔԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«10» նոյեմբերի 2016 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

**«10» նոյեմբերի 2016 թվական N 185–Ա**

## ԳԱՅԱՆԵ ՄԻՆԱՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի 237/310 տնակում բռնկված հրդեհի պատճառով այրվել են նշված տնակի կտուրը և տնակի մեջ գտնվող գույքի մի մասը: Մինասյանների ընտանիքը հայտնվել է սոցիալապես ծանր պայմաններում:

Հաշվի առնելով վերոգրյալը, ելնելով Գայանե Մինասյանի ընտանիքին դրամական օգնություն հատկացնելու անհրաժեշտությունից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացու դիմումը (համայնքապետարանում մուտքագրված 2016 թվականի սեպտեմբերի 28-ին N 11620 թվագրմամբ)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հատկացնել Գայանե Մինասյանի ընտանիքին դրամական օգնություն՝ 200.000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման առաջին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2016 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Կողմ (17)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ս. Բալասանյան ____________

Ա. Ադամյան ____________

Հ. Կարապետյան ____________

Լ. Խաչատրյան ____________

Է. Մկրտչյան ____________

Տ.Հովհաննիսյան ____________

Մ. Սահակյան ____________

Լ. Սանոյան ____________

Վ. Եղիգարյան

Ա. Գրիգորյան

Վ. Հունանյան

Գ. Սարգսյան

Կ. Միքայելյան

Տ. Փանոսյան

Գ. Գրիգորյան

Կ. Թաթարյան

Ա. Տոնոյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ք.Գյումրի
«10» նոյեմբերի 2016 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

**«10» նոյեմբերի 2016 թվական N 186-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ ԲԱՂՆԻՔԻ ԵՎ ՎԱՐՍԱՎԻՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՆՈՒՄՆԵՐԸ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ՝ ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ, ՁԵՎՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և ելնելով հարցի լուծման անհրաժեշտությունից՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է՝**

1.Հատկացնել 4 992 000 (չորս միլիոն ինը հարյուր իննսուներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ յուրաքանչյուր ամիս սոցիալապես անապահով թվով 1920 (մեկ հազար ինը հարյուր քսան) շահառուների՝ բաղնիքի և վարսավիրական ծառայություններից օգտվելու համար:

2.Սահմանել, որ շահառուների ցանկը հաստատում է Գյումրի համայնքի ավագանին՝ համաձայն հավելվածի:

3.Թույլատրել անհրաժեշտ գնումներն իրականացնել բանակցային ընթացակարգի կիրառմամբ՝առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու:

4. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման առաջին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2016 թվականի բյուջեի 10/7/1գործառական դասակարգման (4239) «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Կողմ (17)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ս. Բալասանյան ____________

Ա. Ադամյան ____________

Հ. Կարապետյան ____________

Լ. Խաչատրյան ____________

Է. Մկրտչյան ____________

Տ.Հովհաննիսյան ____________

Մ. Սահակյան ____________

Լ. Սանոյան ____________

Վ. Եղիգարյան ____________

Ա. Գրիգորյան ____________

Վ. Հունանյան ____________

Գ. Սարգսյան ____________

Կ. Միքայելյան ____________

Տ. Փանոսյան ____________

Գ. Գրիգորյան ____________

Կ. Թաթարյան ____________

Ա. Տոնոյան ____________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«10» նոյեմբերի 2016 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

**«10» նոյեմբերի 2016 թվական N 187–Ա**

**ՏԱՐԵՄՈՒՏԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**
**ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրու զինվորական կոմիսարիատի ներկայացրած ցուցակները (համայնքապետարանում մուտքագրված 2016 թվականի նոյեմբերի 02-ին՝ N 13503 թվագրմամբ)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Հատկացնել դրամական օգնություն սոցիալապես անապահով պայմաններում ապրող ներքոգրյալ ընտանիքներին և անձանց.

1) Արցախյան պատերազմում (1991-1994թվականներին) զոհված թվով 104 (մեկ հարյուր չորս) ազատամարտիկների ընտանիքներից յուրաքանչյուրին՝ 20000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 2 080 000 (երկու միլիոն ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N1 հավելվածի,

2) զոհված (մահացած) թվով 169 (մեկ հարյուր վաթսունինը) զինծառայողների ընտանիքներից յուրաքանչյուրին՝ 20000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 3 380 000 (երեք միլիոն երեք հարյուր ութսուն հազար)՝ համաձայն N 2 հավելվածի,

3) Արցախյան պատերազմի 1-ին կարգի հաշմանդամ թվով 16 (տասնվեց) ազատամարտիկներից յուրաքանչյուրին՝ 15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 240 000 (երկու հարյուր քառասուն հազար)՝ համաձայն N3 հավելվածի,

4) 2-րդ, 3-րդ կարգի հաշմանդամ թվով 238 (երկու հարյուր երեսունութ) ազատամարտիկներից յուրաքանչյուրին՝ 10000 (տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 2 380 000 (երկու միլիոն երեք հարյուր ութսուն հազար)՝ համաձայն N 4 հավելվածի,

5) Գյումրի քաղաքի Հայրենական Մեծ պատերազմի մասնակից թվով 45 (քառասունհինգ) վետերաններից յուրաքանչյուրին՝ 15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 675 000 (վեց հարյուր յոթանասունհինգ հազար)՝ համաձայն N5 հավելվածի:

6) 1956 թվականի հոկտեմբերին Հունգարիայի հեղաշրջման ճնշմանը մասնակից թվով 35 (երեսունհինգ) վետերաններից յուրաքանչյուրին՝ 15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 525 000 (հինգ հարյուր քսանհինգ հազար) համաձայն N 6 հավելվածի:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման առաջին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2016թվականի բյուջեի 10/4/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Կողմ (17)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ս. Բալասանյան ____________

Ա. Ադամյան ____________

Հ. Կարապետյան ______________

Լ. Խաչատրյան ______________

Է. Մկրտչյան ______________

Տ.Հովհաննիսյան ______________

Մ. Սահակյան ______________

Լ. Սանոյան ______________

Վ. Եղիգարյան ______________

Ա. Գրիգորյան ______________

Վ. Հունանյան ______________

Գ. Սարգսյան ______________

Կ. Միքայելյան ______________

Տ. Փանոսյան ______________

Գ. Գրիգորյան ______________

Կ. Թաթարյան ______________

Ա. Տոնոյան ______________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«10» նոյեմբերի 2016 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

**«10» նոյեմբերի 2016 թվական N 188-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 2 (ԵՐԿՈՒ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ Միխակ Ղազարյանի Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված զեկուցագիրը (համայնքապետարանում մուտքագրված՝ 2016 թվականի N 13359 թվագրմամբ)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրու համայնքային ենթակայության թվով 2 (երկու) մարզադպրոցներին հատկացնել 400.000 (չորս հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, որից՝

1) «Հրաձգության մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ 200.000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ օդամղիչ հրացանների փամփուշտներ ձեռք բերելու և 100.000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ ջեռուցման նպատակով վառելափայտ ձեռք բերելու համար,

2) «Համալիր մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ 100.000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ ջեռուցման նպատակով վառելափայտ ձեռք բերելու համար:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2016 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Կողմ (17)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ս. Բալասանյան ____________

Ա. Ադամյան ____________

Հ. Կարապետյան ____________

Լ. Խաչատրյան ____________

Է. Մկրտչյան ____________

Տ.Հովհաննիսյան

Մ. Սահակյան

Լ. Սանոյան

Վ. Եղիգարյան

Ա. Գրիգորյան

Վ. Հունանյան

Գ. Սարգսյան

Կ. Միքայելյան

Տ. Փանոսյան

Գ. Գրիգորյան

Կ. Թաթարյան

Ա. Տոնոյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«10» նոյեմբերի 2016 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ու Մ

**«10» նոյեմբերի 2016 թվական N 189-Ա**

### ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՒԲԻԿ ՎԱՐԱԶԴԱՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ 2008-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՈՅԱՑԱԾ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԻ ՎՃԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Ռուբիկ Վարազդատի Խաչատրյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող LAZ 699 P մակնիշի, 45 LO 739 պետհամարանիշի տրանսպորտային միջոցի 2008-2015 թվականների ընթացքում գոյացած գույքահարկի տույժի վճարման նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով, քանի որ վերոնշյալ տրանսպորտային միջոցը 2008 թվականից չի շահագործվել անսարքության պատճառով և առաջացել է գույքահարկի պարտավորություն, որը կազմել է ընդամենը 79459 (յոթանասունինը հազար չորս հարյուր հիսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ, որից մայր գումարը կազմել է 53999 (հիսուներեք հազար ինը հարյուր իննսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 25460 (քսանհինգ հազար չորս հարյուր վաթսուն) Հայաստանի Հանրապետության դրամ: 2016 թվականի օգոստոսի 31-ին վճարել է գույքահարկի մայր գումարը՝ 54000 (հիսունչորս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով, 8-րդ, 9-րդ կետերով և հիմք ընդունելով Ռուբիկ Վարազդատի Խաչատրյանի (հաշվառված՝ քաղաք Գյումրի Թելմանի փողոց տուն 10 հասցեում, անձնագիր N AK 0339710, տրված՝ 2009 թվականի հուլիսի 15-ին, ոստիկանության 016-ի կողմից, սոցիալական ապահովության քարտ 3402500213) դիմումը (համանքապետարանում մուտքագրված 2016 թվականի օգոստոսի 25-ին N9746 թվագրմամբ)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Սահմանել արտոնություն քաղաքացի Ռուբիկ Վարազդատի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող LAZ 699 P մակնիշի, 45 LO 739 պետհամարանիշի տրանսպորտային միջոցի 2008-2015 թվականների ընթացքում գոյացած գույքահարկի տույժի վճարման նկատմամբ՝ ազատելով գույքահարկի տույժի 25459 (քսանհինգ հազար չորս հարյուր հիսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Կողմ (17)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ս. Բալասանյան ________________

Ա. Ադամյան ________________

Հ. Կարապետյան ________________

Լ. Խաչատրյան

Է. Մկրտչյան

Տ.Հովհաննիսյան

Մ. Սահակյան

Լ. Սանոյան

Վ. Եդիգարյան

Ա. Գրիգորյան

Վ. Հունանյան

Գ. Սարգսյան

Կ. Միքայելյան

Տ. Փանոսյան

Գ. Գրիգորյան

Կ. Թաթարյան

Ա. Տոնոյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«10» նոյեմբերի 2016 թ.**